ԴԱՎԹԻ ՎՐԱՆԻՑ ՄԻՆՉև ՆՈՐ ՈՒԽՏ. ԴՌՆԱՊԱՀԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 23.1-5

1 *Դավիթը ծերացել ու հագեցել էր իր ապրած օրերից, երբ իր որդի Սողոմոնին թագավոր կարգեց Իսրայելի վրա: **2** Նա հավաքեց Իսրայելի բոլոր իշխանավորներին, քահանաներին և ղևտացիներին:*

4 *Դավիթն ասաց. Սրանցից ...**5** չորս հազարը՝ դռնապաններ, և չորս հազարն էլ այն բանի համար, որ օրհնեն Տիրոջն այն գործիքներով, որ ես պատրաստել եմ տվել օրհներգելու համար:*

Դավիթը հասկանում էր մի բան՝ Տիրոջ Տունը կարիք ունի դռնապահների: Մարդիկ, ովքեր կանգնած են դռան մոտ՝ պաշտպանելու Աստծո փառքի մուտքը և պահելու սրբությունը:

Ա Մնաց. 9.22–26-ում դռնապահների կարևորության երկու հիմնարար ճշմարտություն

*Նրանք ու նրանց որդիները Տիրոջ տան, այսինքն՝ խորանի տան դռների **<u>պահպանությունն էին անում</u>**: Դռնապանները իրենց **<u>վստահված</u>** պաշտոնի վրա էին լինում միշտ և Աստծու տան սենյակների ու գանձերի վրա էին նշանակված:*

*Սաղ. 84.10 - Որովհետեւ լավ է մէկ օր քո սրահներում քան հազարավոր օրեր ուրիշ տեղ. ավելի ուզում եմ **դուռը պահպանել իմ Աստուծո տան** քան բնակվել ամբարշտության տներում:*

ԻՆՉՈ՞Ւ ԷՐ ԴՌՆԱՊԱՀԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴՔԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԴԱՎԹԻ ՀԱՄԱՐ

- *Պատասխանը թաքնված է Ուզիայի դեպքի մեջ (Բ Թագ. 6.6):*

  1. *Ոզիան փորձեց մտնել այն տարածք, որը իրեն չէր պատկանում:*

  2. *Սրբությունը պահանջում է կարգ, հսկում և պատասխանատվություն:*

- *Այստեղից Դավիթը հասկացավ.*

  եթե դուռը պաշտպանված չէ, ներսում եղած փառքն էլ վտանգված է:

ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՒՅՆՊԵՍ ՈՒՆԻ ԻՐ ԴՌՆԱՊԱՀՆԵՐԸ:

Նոր Կտակարանում «դռնապահ» հասկացությունը մարմնավորվում է երեք ուղղությամբ

1. ***Հիսուսը՝ դուռը և դռնապահը***

   Հով.10.7 – Հիսուսը դարձյալ ասաց նրանց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ***ես եմ ոչխարների դուռը****:*

   Հիսուսը ոչ միայն ***դուռն է****, այլ նաև* ***դռնապահը****:*

Նա հսկում է ***ներսից դուրս****...*

Սաղ. 23.1-6 - ***1*** *Տէրն է իմ հովիւը. եւ կարօտութիւն չեմ ունենալ:*

2 *Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ, եւ հանդարտ ջրերի մօտ՝ տանում է ինձ.*

3 *Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարութեան շաւիղներումը իր անունի համար:*

4 *Թէ եւ գնամ մահի շուքի ձորումը՝ չար բանից չեմ վախենալ. որովհետեւ դու ինձ հետ ես. քո գաւազանն ու քո ցուպը՝ նորանք մխիթարում են ինձ:*

5 *Դու իմ առաջին սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. դու իմ գլուխն օծում ես իւղով. իմ բաժակը խիստ լիքն է:*

6 *Հէնց բարիք եւ ողորմութիւն կգան իմ ետեւիցն իմ կեանքի բոլոր օրերումը. եւ Տիրոջ տանը կբնակուիմ շատ երկար ժամանակ:*

2. ***Յուրաքանչյուր հավատացյալ որպես իր սրտի դռնապահ***

   Հիսուսն ասում է. «Ահա կանգնած եմ դռան առաջ և բախում եմ...» (Հայտ. 3.20):

*Հիսուսը բախում է, բայց դուռը բացելը **մեր պատասխանատվությունն է**:*

Մարկոս 13.34 – Տիրոջը հուսալի դռնապահ է պետք, ով կմնա արթուն:

*Ինչպես այն մարդը, որ հեռու աշխարհ գնալիս իր տունը կթողնի, իր ծառաներին իշխանություն կտա, յուրաքանչյուրի համար իր գործը կսահմանի, իսկ **դռնապանին** կհրամայի, որ արթուն մնա:*

Դռնապահը որոշում է՝

ինչ մտքեր են ներս մտնում,

ինչ խոսքեր են ներթափանցում,

ինչ ազդեցություններ ենք թույլ տալիս ներս,

և ինչ մթնոլորտ է ձևավորվում հոգում:

«Մերժում ենք ամեն մի խորհուրդ... և գերի ենք դարձնում ամեն մի միտք Քրիստոսին» 2 Կոր. 10.5

Սաղ. 141.3 - Տէր, պահապան դիր իմ բերանին, իմ շրթունքների դուռը պահպանիր:

Հիշեք Եզեկիայի թագավորի օրինակը՝

Եթե մենք պաշտպանության տակ չենք պահում մեր սրտի դուռը, ապա աշխարը ներս՝ կթափանցի հենց այնպես, ինչպես Եզեկիան թույլ տվեց Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորին (սկզբում նրա դեսպաններին) մտնել և տեսնել Իսրայելի ողջ գանձարանը (Բ Թագավորներ 20.12–13):

3. Հոգևոր առաջնորդները՝ որպես դռնապահներ

Հովիվները, ավագները և առաջնորդները կոչված են հսկելու եկեղեցու դռները՝

Պողոսն ասում է.

*Զգո՛յշ եղեք ինքներդ **ձեզ համար** և **ամբողջ հոտի**, որի վրա **Սուրբ Հոգին վերակացուներ կարգեց** ձեզ, որպեսզի հովվեք Աստծու եկեղեցին, որ նա ձեռք բերեց իր արյունով (Գործք Առաքելոց 20.28)*

«Նրանք հսկում են ձեր հոգիները» Եբր. 13.17

Հսկելը հենց դռնապահի ծառայությունն է: